ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Սովորողների ներգրավվածության բարձրացումը հարցադրումների մեթոդի օգնությամբ

Հետազոտող ուսուցիչ՝ Մանուկյան Տաթևիկ

Երևանի Մ. Քաջունու անվան h. 54 ավագ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Հետազոտական համատեքստ (գրական ակնարկ) 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 10

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 12

Ամփոփում 14

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 15

Հավելված. (դասապլաններ) 17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 57

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի նպատակը և արդիականությունը

Իմ աշխատանքի նպատակն է հետազոտել աշակերտների ներգրավվածության բարձրացումը հարցադրումների մեթոդի կիրառությամբ:

Հայտնի է, որ հարցադրումների մեթոդը մեծ ազդեցություն ունի ներգրավվածության բարձրացման վրա:

Հետազոտությունն իրականացվել է 2018 թվականին ԱԲ ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունը իրականացրել եմ սովորական հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանում: Ինձ հետքրքրում էր, թե ինչպես եմ կարողանալու բարձրացնել աշակերտների ներգրավվածությունը. այս խնդիրը, իրոք առկա է դասարանում. արդի կրթահամակարգում նորովի է արժևորվում հարցադրումների մեթոդի կիրառությունը և համակողմանի ուսումնասիրության է ենթարկվել բազում հետազոտողների կողմից: Հետազոտությունն ինձ համար կարևորվում էր նաև այն հանգամանքով, որ աշակերտներից ոմանք ունեն արդեն մասնագիտական նախընտրություններ և առավել հետաքրքրությամբ սովորում են այն առարկաները, որոնք պետք են իրենց ընդունելության համար, մանավանդ որ հաճախում են մասնավոր պարապմունքների: Իմ առարկայի նկատմամբ անտարբերություն չեմ նկատել, բայց տարեսկզբից որոշակի պասիվություն եմ նկատել:

ԱԲ ծրագրին մասնակցությունից հետո իմ մեթոդների և մոտեցումների հարցում բավականին փոփոխություններ եմ կատարել: ինձ առանձնակի հետաքրքրում է հարցադրումների մեթոդը, որովհետև այն կարևորագույն մաս եմ համարում ժամանակակից ուսումնառության արդյունավետությունը ապահովելու գործում:

Ինձ հետաքրքրում է , թե ինչքանով է բարձրանալու աշակերտների ներգրավվածությունը, մանավանդ որ դասարանում ունենք աշխատասեր և ընդունակ աշակերտներ: Հետաքրքիր էր, թե ինչ հաջողություններ եմ գրանցելու, քանի որ ինքս հարցադրումների մեթոդը կատարելագործելու խնդիր ունեմ: Հարցադրումների մեթոդ նախկինում էլ կիրառել եմ, սակայն դասի որոշակի մասում ու առանց պլանավորման, առավել շատ փաստային հարցադրումների միջոցով, իսկ այժմ այն գործածելու եմ ամբողջ դասաժամի ընթացքում և նախապես պլանավորված հարցերի միջոցով:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածական մասից, հետազոտական համատեքստից, գործնական համատեքստից, հետազոտության ընթացքի նկարագրությունից, տվյալների մշակում և վերլուծությունից, ամփոփումից:

Հետազոտական համատեքստ (գրական ակնարկ)

Ներգրավվածությունը ուսուցման կարևորագույն բաղադրիչներից մեկն է, իսկ հարցադրումների մեթոդը՝ դրա վրա ազդելու լավագույն ռազմավարություններից: Ներգրավվածություն ապահովելը ուսումնառության կարևորագույն բաղադրիչն է, որից կախված է ուսումնառության որակը: Տարեցտարի մեթոդները վերամշակվում ու կատարելագործվում ոեն, և առավել շատ ձևեր ու հնարներ կան աշակերտներին դասին ներգրավվելու համար:

Ցավոք, հայ մանկավարժական գրկանության մեջ չհաջողվեց գտնել խնդրի մասին ներկայացնող գրական նյութ: Հետազոտությունն իրականացնելիս օգտվել եմ ԱԲ-ի կողմից թարգմանված գրականությունից: Սրանցինց ինձ համար առավել արժեքավոր են եղել ներքոնշյալ գրքերը:

1. Քրիս Ա-ն իր աշխատությունում, որտեղ ներկայացնում է, թե ինչպես ներգավել աշակերտներին հարցադրումների մեթոդի օգնությամբ, նշում է, որ աշակերտները ներգրավված են, եթե ունեն մոտիվացիա, կամ անհատական շահախնդրություններ տվյալ առարկայից: Հեղինակը գտնում է, որ եթե մենք ստեղծենք հետազոտութան մշակույթ, սա հստակ մեզ համար բանալի կդառնա դեպի ներգրավվածություն: Հեղինակը նշում է, որ այն պարագայում, երբ դասի նկատմամբ կա անհետաքրքրություն և անտարբերություն, ուսուցիչները պետք է մղվեն կատարելագործելու իրենց մասնագիտական կարողությունները, իրենց դասապրոցեսում ներառեն հարցադրումների մեթոդը: «Ի՞նչ են անում հաջողակ ուսուցիչները հարցին հեղինակը պատասխանում է, որ նրանք պատասխանատվություն են ստանձնում դասարանում ապահովել ներգրավվածություն և ակտիվություն: Նա նշում է , որ հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցիչները կարող են ազդել աշակերտների մոտիվացիայի վրա, և կան մեթոդներ, որոնք ավելի գրավիչ են դարձնում դասը: Հեղինակը ներկայացնում է,որ հարցադրումների մեթոդը բարձրացնում է աշակերտների ներգրավվածությունը, հետաքրքրություն առաջացնում դասի նկատմամբ: Հարցադրումների մեթոդի օգնությամբ ուսուցիչները պարզում են աշակերտների գիտելիքների չափը, օգնում հասնելու ավելի բաձր ճանաչողական մակարդակների:

Հեղինակը ներգրավվածության բարձրացման համար առաջարկում է հարցադրումներ իրականացնելու մի շարք ռազմավարություններ, որոնցից են ստեղծել այնպիսի դասարանային միջավայր, որ բաց է երկխոսությունների համար, այսինքն՝ պետք է խրախուսվեն ճիշտ պատասխանները; Հեղինակը կարևոր է համարում, ինչպես նախապես պլանավորված հարցերը, այնպես էլ տրված պահին ստեղծվող հարցերը, հարցեր պետք է ընտրել՝ հաշվի առնելով աշակերտների գիտելիքների մակարդակներն ու կարիքները, հարցերը պիտի լինեն հակիրճ ու հստակ, խմբին կամ անդամներին պետք է հասցեագրել հարցերը պատահականորեն, պետք է տրամադրել բավարար ժամանակ հարցի պատասխանը լսելու համար, առաջարկել հարցեր, որոնք կառաջացնեն աշակերտների հետաքրքրությունը: Հեղինակը կարևոր դիտրկում է անում, որ պարզ հարցերից շղթայական անցնելով ավելի բարձր հարցերի՝ զարգացնում ենք աշակերտների բարձր մտածողական ունակությունները /Chris A. Caram and Patsy B. Davis, 2005/:

Ջենիֆեր Ա. Ֆրեդրիխսը եւ Ուենդի Մակկոլսկին, անդրադառնալով ներգրավվածությանը, առանձնացնում է «մետաներգրավվածություն» տերմինը, որի մեջ ներառում է վարքային, հուզական և ճանաչողական ներգրավվածություն: Հեղինակը կարևորում է նաև ներգրավվածությունը մոտիվացիայից տարբերելու առանձնահատկությունը Մոտիվացիան ներառում է հոգեբանական առանձնահատկությունները, անհատական տարբերությունները, իսկ ներգրավվածության դեպքում անհատը զբաղված է ինչ-որ բանով: Նա նշում է, որ ուսուցչի հետևողական աշխատանքի արդյունքում կարել է պահպանել դասարանային ներգրավավածությունը՝ իր վարքային, հուզական և ճանաչողական կողմերով: /Jennifer A. Fredricks and Wendy McColskey/

Ներգրավելու մեկ այլ տարբերակ են առաջարկում Սմարթ ծրագրի հեղինակները, նորագույն տեխնոլոգիաների միջոցով աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար, սա հեղինակները կարևոր են համարում՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները և ծրագրի առաջարկած զանազան ուսումնառության ձևերը: : /smarttech.com/GeneralInformation/

Wes Fryer ը իր հոդվածում անդրադառնալով զբաղված լինել և ներգրավված լինել հասկացություններին, նշում է, որ ներգրավվածությունը լայնորեն տարածված է լեզվաբանության մեջ, բայց հստակ սահմանված չէ: Հեղինակը նշում է, որ ներգրավվածություն ապահովելու համար ուսուցիչները այն նախ պետք է սահմանեն կոնտեքստում: Երբեմն ավելի հեշտ է զվարճացնել աշակերտներին, քան ներգավել նրանց: Հեղինակը հարց է բարձրացնում, թե ինչպես են արդյոք կատարողները ներգրավում իրենց լսարաններին: Նրանք կարող են խնդրել ինչ-որ բեմականություն կամ հնարանք ցուցադրել, կամ կարող են հարցեր հղել մի քանիսին կամ ամբողջ կոլեկտիվին: Հեղինակը մի կարևոր առանձնահատկություն է նշում, որ այս դեպքում մենք ակտիվ ենք պահում բոլորին, քանի որ նույնիսկ այն մարդիկ, ովքեր չեն պատասխանում ակտիվ են, քանի որ սպասում են, որ հարցերը կարող են հղվել հենց իրենց: Բերում է կինոյի օրինակը, քանի որ այստեղ պասիվ դիտողներ են ու կարող են նույնիսկ քնել այնտեղ: Այստեղ հիմնական գաղափարն այն է, որ ներգրավված լինելը ուշադրությունը չէ: Զբաղված ուսումնառողները շահագրգռված են, ակտիվ, ինքնուրույն ղեկավարում են , հարցեր տալիս, առաջարկում նոր գաղափարներ, կայացնում են որոշումներ եւ կատարելագործում իրենց ուսումը: Ինձ այս հոդվածում դուր եկավ հատկապես կոկտեյլի գաղափարը. հեղինակը ներկայացնում է, որ համապատասխան մարտահրավերների ընտրությունը և դրանց ներդրումը դասապրոցեսում, այն դարձնում են մի կոկտեյլ, ինչի գայթակղությանը դիմադրելը շատ դժվար է (Wes Fryer , 2012):

Հարցադրումների մեթոդը հնագույն ժամանակներից կիրառված մեթոդ է, որ դարերի ընթացքում կատարելգործվել է ու դարձել ուսուցման կարևորագույն մասը: Սակայն այն կրել է որոշակի փոփոխություններ իր զարգացման գործում. Զուտ կրկնության համար առաջադրվող հարցերը, կամ փաստեր արձանագրողները արդեն համարվում են հնացած, ինչում համոզվում ենք նաև ժամանակակից գործուն գրականության տեսական նյութն ուսումնասիրելիս:

Հարցադրումների մեթոդը կիրառելիս մեծապես օգտվել եմ Փեթիի աշխատությունից, որտեղ մանրամասն անդրադարձ է հեղինակը կատարում հարցադրումների մեթոդին:

Այս աշխատությունը ինձ համար ուղենիշ է եղել հետազոտությունը կատարելիս: Աշխատությունը հեղաշրջում է կատարել իմ դասավանդման մեթոդների մեջ: Հեղինակը որ միայն շարադրել է ասելիքը, այլև հիմնավոր փաստերով տեսանելի է դարձրել:

Նա նշում է հարցադրումների մեթոդի մի շարք առավելություններ, որոնցից են ակտիվ և հետաքրքիր գործընթաց լինելը, ստեղծում է արագ հետադարձ կապ, ստեղծում է փոխանցելի գիտելիք, մոտիվացնում է և այլն: Փեթին թերություններից նշում է, որ կարող է ժամանակատար լինել, հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար և դժվարացնում է խմբում բոլոր աշակերտների ներգավվածությունը: Առաջին երկուսի հետ կարելի է համաձայնել, քանի որ հետազոտության որոշ մասերում զգացվել է դա, սակայն երրորդ կետի հետ, որը վերաբերում է աշակերտների ներգրավվածությանը, միանշանակ չի կարելի համաձայնել, քանի որ հակառակն եմ նկատել հեազոտության ընթացքում:

Կարևոր հատված է նաև Փեթիի ներկայացրած հարցադրումների տեխնիկայի հատվածը, որտեղ հեղինակը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է հարցադրումներ ճիշտ տալու տեխնիկան: Հեղինակը նշում է, որ նախ պետք է հարցերը հստակ ձևակերպել, սկսել պարզ հարցադրումներց, հարց տալ, և ժամանակ տրամադրել աշակերտների պատրաստվելու համար: Կարևորում է նաև ճիշտ պատասխանները խրախուսելը, իսկ սխալները նրբորեն շտկելով առաջանցնել: Հեղինակը նշում է, որ եթե ուզում ենք մեր աշակերտները «չօտարանան» պետք է հարց հնչեցնել, ապա նոր տալ անուններ: Հեղինակը ճիշտ է համարում հարցերի հավասարաչափ բաշխումը: Հետաքրքրական է, որ առանձնացնում է բաց և փակ հարցեր: Այս մոտեցումը հարցադրումների հստակ տարանջատում է կատարում և փաստում, որ բաց հարցերը մտածելուն ուղղված հարցեր են: Հեղինակը հոդվածում նաև առանձնացնում է հարցերի անվանումներ՝ փաստայինից մինչև խնդիրներ լուծող: Եվ հեղինակը փաստում է, որ բարձր մտածողություն զարգացնելու համար պետք է պրակտիկայում կիրառել բարձր տիպի հարցեր/ Geoff Petty 2009/:

Քերոն Գ. Լուիս «Հարցադրումների հմտության զարգացում» աշխատության մեջ նշում է հարցադրումներ տալու ընդհանուր սկզբունքներ, որոնց մեջ առաջնային տեղում ներգրավվածության ապահովումն է: Հեղինակը նաև առանձնացնում է հարցերի ճիշտ ձևակերպումները, հարցերը ձևակերպել դասարանի մակարդակին համապատասխան:Նա գտնում է, որ ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի հարցադրումների իր տեխնիկային,

որովհետև այն հաճախակի կիրառվող գործիք է և լավ դասավանդման բանալին է:. Քանի որ մեթոդը հնարավոր չէ տարանջատել բովանդակությունից, ուսուցիչը պետք է տիրապետի իր առարկային, եթե ցանկանում է կատարելագործել հարցադրումների իր տեխնիկան: Հավաստի բանիմացությանը ոչինչ չի կարող փոխարինել: Այս հոդվածում ինձ համար կարևոր էր մի միտք (որ մյուս հոդվածներում չհանդիպեցի), այն է՝ հարցերի նպատակներ հետապնդելը: Դրանք են քննադատական մտածողությանը նպաստելը, նպատակների իրագործումը: Լավ հարցերը նպատակաուղղված են , հստակ են , հակիրճ են , բնական են , մտածելու տեղիք են տալիս (դրանք խթանում են մտածողությունը և պատասխանները). սահմանափակ են (ուղղված են տրամաբանական շղթայի մեկ կամ երկու , համապատասխանեցվում են դասարանի մակարդակին (հարմարեցվում են՝ ըստ դասարանում սովորողների տեսակների): Քերոնը ևս շատ է կարևորում հարցադրումների պատասխանները լսելու համար տրվող ժամանակահատվածը. Նա նշում է, որ ուսուցիչները բավարար ժամանակ չեն տրամադրում աշակերտներին հարցերը տալուց հետո, մինչդեռ շատ կարևոր է դա, քանի որ երբ սպասելու ժամանակը երկար է, սովորողների պատասխաններն ընդարձակվում են, իսկ հակառակ դեպքում նրանք տալիս են շատ կարճ պատասխաններ (Այս խնդիրը առկա է եղել նաև իմ պրակտիկայում): Այն նաև , ըստ հեղինակի, կարող է փոխել սովորողի մասին մեր ունեցած պատկերացումները: Սպասելու հնարավորությունը ավելացնում է սովորողների հարցերի քանակը, պատասխանների զանազանություն է առաջ բերում: Այն նաև ուսուցիչներին է հնարավորություն տալիս սպասելու և ավելի երկար մտածելու, այս դեպքում աշակերտները պատասխանում են ոչ միայն հիշողությունն ստուգող, այլև տրամաբանությունն ստուգող հարցերին: Հեղինակը ևս անդրադարձ է կատարում Բլումի տաքսոնոմիայի օգնությամբ տրվող հարցերին ու եզրակացնում, որ ուսուցիչներն իրենց հարցադրումների մեթոդը կատարելագործելու համար պետք է ձայնագրեն դասը, և այն վերլուծելով՝ շարունակաբար շտկեն ու կատարելագործեն այն (Karron G):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իմ հետազոտությունը իրականացրել եմ հունվարի վերջից փետրարի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հետազոտությունն իրականացրել եմ վեց հաջորդական դասաժամերի ընթացքում:

Հետազոտությունն իրականացրել եմ սովորական հանրակրթական դպրոցում, որտեղ կա պետականորեն հաստատված չափորոշիչ, ծրագիր, դասագրքեր, թեմատիկ պլանավորում: Աշակերտերի հետ ուսումնառություն իրականացնելիս կա դեռևս որոոշակի ավանդական մոտեցում: Հետազոտության համար ընտրել եմ 11-րդ դասարանը, որը պատմական հոսքի դասարան էր, և առարկան առաջնային էր համարավում: 10-րդ դասարանում հայոց լեզուն ուսումնասիրել ենք 3 դասաժամով, իսկ այդ տարի՝ 4 դասաժամով: Դասարանը բաղկացած էր 20 աշակերտից, սակայն հետազոտության ընթացքում 2-ը բացակայել են: Աշակերտների մեծ մասն աչքի էր ընկնում ընդունակություններով, աշխատասիրությամբ: Նրանցից շատերը բազմակողմանի զարգացած էին, հետաքրքրություն էին ցուցաբերում արվեստի տարբեր տեսակների, ժամանակակից ծավալվող իրադարձությունների հանդեպ, դասարանում կային մոտիվացիայի պակաս ունեցոող աշակերտներ, նաև վարքային խնդիր ունեցող ու ընդհանրապես չմոտիվացվող աշակերտ:,

Դասարանը անցած տարվանից սկսած հաճույքով էր մասնակցել դասերին, աշակերտների մեծ մասը մոտիվացված են եղել և ներգրավված դասապրոցեսին, սակայն արդեն կիսամյակի ավարտին նրանք սկսեցին մասնավոր պարապմունքները, և ներգրավվածությունը պակասեց: Սա խնդիր համարելով դասարանում՝ որոշեցի հետազոտել հենց ներգրավվածությունը՝ հարցադրումների մեթոդի գործածությամբ: Հարցադրումների մեթոդը ևս մի քանի տարի է՝ իմ թիրախում է, քանի որ այն շարունակ կիրառելով՝ նպատակ ունեմ կատարելագործել:

Հետազոտությունն իրականացնելիս ինձ համար հիմնական գրավոր վկայություններ են եղել Ելքի թղթերը , դասալսողներից հավաքած վկայություններն ու նրանց հետ ունեցած զրույցները: Վերջում նաև հարցազրույցներ եմ հավաքել աշակերտներից: Վերջնական արդյունքները ունենալու ու համեմատություն կատարելու համար հանձնարարել եմ իրենց անցած թեմաներն ընդգրկող թեմատիկ գրավոր աշխատանք:

Հեազոտությունն իրականացրել եմ «Հայոց լեզու» առարկայից: Այս ժամանակահատվածում մենք ուսումնասիրում էինք «բայ» թեման, որը հնարավորություն է տալիս ոչ միայն քերականական հատկանիշները զանազանել, ճիշտ սովորել, գրագետ կիրառել խոսքում, այլև զարգացնել ստեղծագործական հմտություններ՝ այն կիրառելով տեքստում: Այս առումով եղել են հանձնարարված տնային աշխատանք և դասարանում կատարվող աշխատանք: Բացի նշվածներից՝ շատ են եղել խմբային աշխատանքները, որոնք տարբերակված ուսուցում կատարելու հնարավորություն են տվել, ինչն էլ , իհարկե, իր հերթին է բարձրացրեել ներգրավվածությունը:

Հարցադրումները նախապես մշակել ու ներառել եմ դասապլանում: Դասապլանում հարցեր կազմելիս աշխատել եմ օգտվել Փեթիի հարցադրումների մասին աշխատությունները: Հարցադրումները փորձել եմ կազմել պարզից բարդ սկզբունքով: Դրանք աշխատել եմ հնարավորինը պարզեցնել աշակերտների համար: Աշխատել եմ բաց հարցերի միջոցով անընդհատ մտածելու հնարավորություն տալ: Հարցադրումների մեթոդը կիրառել եմ և՛ խմբային աշխատանքի, և՛ զույգերով աշխատանքի ընթացքում: Հարցադրումներ կիրառելիս գործածել եմ ծրագրից սովորած մի շարք մեթոդներ, օրինակ՝ գրել աշակերտների անունները, գցել բաժակի մեջ և պատահականության սկզբունքով դուրս բերել անուններն, ու աշակերտներն ընդգրկել դասապրոցեսին: Գործածել եմ մատներով պատասխանի մեթոդը: Աշխատել եմ ինքնաշտկման հնարավություն տալ լրացուցիչ հարցադրման միջոցով: Հիմնականում հարցադրումները կիրառել եմ տնային աշխտանքի ստուգման, նոր դասի յուրացման ու ամփոփման ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Երբ աշակերտները իմացան հետազոտության մասին, սկզբում չհասկացան, թե ինչի մասին է խոսքը, հետո մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին դասերի հանդեպ: Մի բան ինձ համար հստակ պարզվեց, այն, որ աշակերտները հարցադրումների օգնությամբ ակտիվություն են դրսևորում ամբողջ դասապրոցեսի ընթացում: Նաև ավելի հստակ երևաց, որ հարցադրումների մեթոդը գրեթե միաձույլ է ներգրավվածություն հասկացությանը, քանի որ հարցադրումներն անմիջապես ներգրավում են աշակերտներին դասապրոցեսին:

Լավ ստացվել է թիրախավորել աշակերտներին և հավասարաչափ բաշխել հարցերը դասարանում: Դասը հագեցած է եղել միջոցների բազմազանությամբ: Գրեթե բոլոր դասերին առկա է եղել էլեկտրոնային գրատախտակ, որն ապահովել է դասի վիզուալ կողմը: Դասերին աշխատել ենք ոչ միայն դասագրքերով, այլև տեքտերով, որը հետքրքրություն է առաջացրել և ակտիվացրել դասապրոցեսը: Բոլոր դասերի անբաժան մասն է եղել ելքի թղթերը, որոնց աշակերտները շուտ վարժվեցին:

Ակտիվությամբ աչքի են ընկել գրեթե բոլորը: Առաջին հերթին ուզում եմ շեշտել տղաների ներգրավվածությունը, որոնք նախորդ կիսամյակի պասիվ դիտողներից վերածվեցին ակտիվ ուսումնառողների: Նրանց գրանցած հաջողությունը տեսանելի է եղել նաև հետո տրված թեստային աշխատանքի արդյուքում, որտեղ բավականին հաջող կատարել էին հանձնարարված առաջադրանքները:

Ես զգացե լեմ դասապլանների դրական արդյունքը խնդիրը ուսումնասիրելիս, որովհետև պալանավորելով դասը, այնտեղ հստակ ներառելով տրվելիք հարցերը, հետո անդրադառնալով դրան, շարունակ կատարելագործել եմ մեթոդը, նաև որոշակի լուծում տվել ներգրվվածության խնդրին:

Խնդրին անդրդառնալով՝ ավելի լավ հնարավորություն եմ ունեցել ճանաչելու սեփական աշակերտներին, բացահայտել նրանց հնարավորություններն ու կարողությունները: Հետազոտության արդյունքում դասին ներգրավվել են տղաներ Է-ն, Գ-ն, Հ-ն, աղջիկներից Է-ն, Լ-ն, Ա-ն, Գ_ն, որոնք ընդունակություններով աչքի են ընկել, բայց ավելի պասիվ են եղել:

Նշված աշակերտները ելքի թղթերում նշումներ էին կատարում, որ դասը հետաքրքիր էր իրենք հեշտությամբ դասից գրեթե ամեն ինչ սովորեցին: Սա նշանակում է, որ եթե

տոկոսային հարաբերությամբ ներկայացնենք 27 տոկոսով բարձրացել է աշակերտների ներգրավվածությունը:

Յուրաքանչյուր դասից հետո դրական տեղաշարժ եմ արձանագրել իմ՝ հարցեր տալու, հանկարծաստեղծ լինելու, ոչ պլանավորված իրավիճակներից հեշտությամբ ելք գտնելու գործում: Հետազոտությունը հնարավորություն է տալիս համակողմանի ուսումնասիրել խնդրին և միջամտությանը առնչվող տեսական նյութեր, ապա դրանք ուսումնասիրել գործնական կիրառության մեջ: Թեպետ որոշ նյութեր, ցավոք, ուսումնասիրել եմ հետազոտությունը կատարելուց հետո, սակայն հիմնական նյութի ուսումնասիրությունը եղել է նախապես:

Հետազոտությունը հնարավորություն է տալիս հավաքել տվյալների մեծ պաշար, որն, անշուշտ, դրական արդյունք է ունենում դասի զարգացման վրա:

Սրանց հետ միաժամանակ արձանագրել եմ նաև թերություններ, որոնցից է ժամանակի ոչ ճիշտ կառավարումը: Չնայած եղել են դասեր, որտեղ լիարժեք ստացվել է: Ես թերություն եմ զգացել հարցադրումների տեխնիկան կիրառելիս. Կարիք է եղել երբեմն հստակեցնել հարցերը: Հետազոտության ընթացքում եղել է դեպք, որ չի ստացվել դասն անցկացնել էլեկտրոնային դասարանում, ստիպված եմ եղել գրատախտակին գրել օրինակները, որ պատրաստել էի կամ բանավոր ասել:

Ամփոփում

Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարելի է փաստել, որ այն խնդիրը, որ վեր ենք հանել ու ուսումնասիրել, որոշակի լուծում է ստացել, քանի որ որոշ չափով բարձրացել է աշակերտների ներգրավվածությունը: Կարող ենք փաստել, որ դասն ամբողջությամբ կարելի է անցկացնել հարցադրումների մեթոդով, կիրառել հարցեր տալու տարբեր տեխնիկաներ և իհարկե, բարձրացնել սովորողներ ներգրավվածությունը: Կետերով առանձնացնելով առավելություններն ու թերությունները, կարելի է գալ հետևյալ եզրակացություններ.

Առավելություններ.

1. Դասերը հագեցած են եղել միջոցների բազմազանությամբ, այսինքն՝ կիրառվել են էլեկտրոնային գրատախտակ, տեքստային նյութեր, դասագրքեր, կպչուն թղթիկներ:
2. Աշակերտները հետաքրքրված են եղել դասով ու ակիվ մասնակցություն են ունեցել դրան:
3. Բոլոր դասերը նախապես ունեցել են դասապլաններ, իսկ օրվա վերջում դրանց ավելացել են անդրադարձերը դասին, ինչը օգնել է օրեցօր կատարելագործել ուսումնական գործընթացը, այսինքն՝ պլանավորել հարցերը, դասի ամբողջ ընթացքն առհասարակ:
4. Հետազոտությունը լավ հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել սեփական աշակերտներին:
5. Հնարավորություն է տալիս կատարելագործել սեփական մեթոդների կիառությունը: Ճանաչել նաև սեփական թերություններն ու առավելությունները:
6. Ավելի խորը և համակողմանի ուսումնասիրել այն խնդիրն ու միջամտությունը, որը կիրառելու ես դասարանում, ընդ որում այն ուսումնասիրում ես թե՛ տեսական նյութի միջոցով, թե՛ գործնական կիրառության մեջ:
7. Շատ տվյալներ հավաքագրելու հնարավորություն է տալիս, որ հաստատ իր նպաստն է դնելու հաջորդ դասերի լավ ընթացքի վրա:

Թերություններ, որոնք առկա են եղել դասերին.

1. Ժամանակի ոչ ճիշտ կառավարումը:
2. Երբեմն սխալ արված հարցադրումը կամ խճճված հարցադրումը:
3. Որոշ դեպքերում պլանավորած ընթացքից շեղումը, ինչը որոշակի խառնաշփոթ ու փոռոխություն է մտցրել դասի մեջ:
4. Անկանխատեսելի որոշ բացակայություններ հետազոտության ընթացքում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալները հետազոտելիս և վեր հանելիս նկատելի էին հետևյալ առավելությունները՝ Ելքի թղթերում 95 տոկոսով դրական կարծիքներ էին նշված. Աշակերտները նշում են, որ ամեն ինչ սովորել են և հասկանալի է եղել: Սա անչափ ուրախալի էր, սակայն ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար ես հանձնարարել էի նաև գրավոր աշխատանք, որի արդյունքը բավականին գոհացուցիչ ու հաճելի էր, բացի 1 չմոտիվացվող աշակերտի աշխատանքից, բոլորը միջինից զգալի բարձր մակարդակի գրավոր աշխատանք էին գրել: Նրանցից 4-ի աշխատանքը անսխալ էր, ինչն անչափ ոգևորիչ էր ինձ համար, սա ընդհանուր աշակերտների թվի 21 տոկոսն է , 90 տոկոսը դրական արդյունք է ցույց տվել, սակայն գրավոր աշխատանքը մի բան փաստեց, որ ոմանք տեքստերի մեջ դժվար էին տարբերակել ձևաբայերը, այսինքն՝ այնուամենայնիվ տեքստային աշխատանքները քիչ են եղել, դրանք պետք է վերնայել ու բարելավել:

Աշակերտների ընդհանուր թիվը հետազոտության ընթացքում	Ներգրավված աշակերտների թիվը	Գրավոր աշխատանքի արդյունքում միջինից բարձր
18	17	17

	Ներգրավվածության բարձրացում հետազոտությունից հետո 27 տոկոս	Միջինից բարձր գնահատական ստացած աշակերտներ հետազոտությունից հետո 90 տոկոս

Հավելված. (դասապլաններ)

Դասապլան 1

Ուսուցիչ

Առարկա՝	Հայոց լեզու	Ամսաթիվ	15:1: 2017	Կիսամյակ	1-ին	Դասարան	11-3
Խմբի բացվածք՝	Աղջիկ: 11 Տղա: 7 OS ՈՒՀԿ:						
Թեմա՝	Անկատար ձևաբայ						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կպչուն թղթեր, դասագիրք						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասաժամերին ծանոթացել են անկախ և կախյալ ձևաբայերի տարբերություններին, ընդհանուր բնութագրին:						
Դասի նպատակը՝	Աշակերտները պետք է հասկանան թե որն է անկատար ձևաբայը, Տարբերակել անկատար ձևաբայը կոնտեքստում:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. Սահմանել, թե ինչ է անկատար ձևաբայը, Կիրառել նախադասությունների մեջ: Տարբերել անկատար ձևաբայը համանուն գոյականից						
Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները				Նպատակներին հասնելու ռազմավարությունը			
Կենտրոնանա հարցադրումների մեթոդի վրա				Հարցադրումների մեթոդի կիրառման արդյունքում փորձել բարձրացնել աշակերտների ներգրավվածությունը:			

Գործողություններ (ժամ/տևողություն) 45 րոպե	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ *Ուսուցիչ*	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Սկիզբ **10 րոպե**	Աշակերտները ամփոփում են նախորդ դասը՝ ներկայացնելով տնային աշխատանքները:	Կատարում է շտկումներ / եթե կան այդպիսիք/ , ամփոփում նախորդ դասը:	
5 րոպե	Ծանոթանում են նոր դասի թեմային Աշակերտները փորձում են գտնել տարբերությունները:	Ներկայացնում է դասի նպատակները Ուսուցիչը գրատախտակին գրում է հետևյալ նախադասությունները՝ 1. Աղջկա **պարում** ամեն ինչ ներդաշնակ էր:	Կարո՞ղ եք բացատրել ընդգծված բառերի գործածության տարբերություն-ները

10 րոպե		2. Աղջիկը **պարում** էր ինքնամոռաց: Ուսուցիչը ուշադրություն է հրավիրում ընդգծված բառերին:	Ի՞նչ խոսքի մասեր են ընդգծված բառերը: Քերականական ի՞նչ վերջավորություն են ստանում:
	Պատասխանում են հարցերին:		Ի՞նչ ժամանակով է կիրառված ‘,,պարում,, բայը: Ինչպիսի՞ գործողություն է ցույց տալիս ,,պարում,, բայը:
Ընթացք-25 րոպե			Կարո՞ղ եք կազմել այլ բայերով նմանատիպ օրինակներ:
	Գրատախտակին գրում են տարբեր օրինակներ:	Առաջարկում է աշակերտներին գրատախտակին գրել	Ինչպե՞ս է կազմվում պարզ բայերի անկատար դերբայը:

	Պատասխանում են հարցերին:	պարզ և ածանցավոր տարբեր բայեր, ապա առաջարկում է կազմել դրանց անկատար դերբայը: Առաջարկում է աշակերտներին կազմել	Ինչպե՞ս է կազմվում սոսկածանցավոր բայերի անկատար դերբայը: Ինչպե՞ս է կազմվում Բազմապատկական բայերի անկատար դերբայը: Ինչպե՞ս է կազմվում կրավորական և պատճառական բայերի անկատար դերբայը: Ի՞նչ վերջավորություն են ստանում այս

		գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայը	բայերը: Ինչու՞ են ստանում այդ վերջավորությունները:
	Աշակերտները դասակարգված գրում են բոլոր պարզ և ածանցավոր բայերի անկատար դերբայը	Ամփոփում է դասը: Հանձնարարում է տնային աշխատանք:	
Ամփոփում 10 րոպե	Դասագրքից կարդում են վարժություն, դուրս բերում անկատար ձևաբայերը:	Հավաքում է «Ելքի քարտեր»	

Տերմիններ **Գրագիտություն** **Թվագիտություն**	Անկատար ձևաբայ, ներկա և անցյալ ժամանակաձևեր, բաղադրյալ ժամանակաձև, պարզ բայեր, կրավորական բայեր, բազմապատկական բայեր, պատճառական բայեր:		
Աջակցություն			
Գնահատում	*ձևավորվող գնահատում:*		
Դասին անդրադարձ	*Դասը անցավ գրեթե պլանավորած դասապլանին համապատասխան* : Եղան մի քանի չպլանավորված հարցեր, որնք նույնպես հնչեցրի առավել պարզ ու հասկանալի թեման դարձնելու համար: Մասնավորապես այս հարցը դասի սկզբում տրվեց. «Ի՞նչ է նշանակում *անկատար* բառը», «Իսկ այն ի՞նչ կնշանակի որպես ձևաբայ»: Սակայն հարցերը շատ չշեղեցին դասն իր պլանավորած ընթացքից, ու այն անցավ նշված դասապլանին համապատասխան: Կարողացա անվանակոչվածներին հրցադրումներ տալու շնորհիվ ներգրավել ամբողջ դասարանին՝ բացի 1 աշակերտից, որին ոչ մի կերպ չհաջողվեց մոտիվացնել: Սկզբում տպավորություն ստացա, որ բոլորն արտակարգ յուրացրին, սակայն հետո պարզվեց, որ աշակերտներից ոմանք այդքան էլ արագ չեն		

	տարբերակում անկատարը համանուն գոյականից, իրենց ընկերների օգնությամբ կատարվեց ուղղում, որից հետո ավելի արագ և հեշտությամբ էին աշակերտները գտնում ու դուրս գրում անկատար ձևաբայերը:

Դասապլան 2

Ուսուցիչ

Առարկա՝	**Հայոց լեզու**	**Ամսաթիվ**	**17: 01 2017**	**Կիսամյակ**	**2-րդ**	**Դասարան**	11-3
Խմբի բացվածք՝	**Աղջիկ: 11 Տղա: 7 OS ՈՒՀԿ:**						
Թեմա՝	Ապակատար ձևաբայ						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կպչուն թղթեր, դասագիրք, անվանական թերթիկներ:						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասաժամերին ծանոթացել են անկատար ձևաբայերի ընդհանուր բնութագրին, քերականական առանձնահատկություններին:						
Դասի նպատակը՝	Աշակերտները պետք է հասկանան թե որն է ապակատար ձևաբայը, Տարբերակել ապակատար ձևաբայը կոնտեքստում, իմանալ դրա քերականական հատկանիշները:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						

Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. Սահմանել, թե ինչ է ապակատար ձևաբայը, Կիրառել նախադասությունների մեջ: Տարբերել ապակատար ձևաբայը անորոշի սեռական հոլովից:

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Կենտրոնանա հարցադրումների մեթոդի վրա	Հարցադրումների մեթոդի կիրառման արդյունքում փորձել բարձրացնել աշակերտների ներգրավվածությունը:

Գործողություններ (ժամ/տևողություն) **45 րոպե**	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ** ***Ուսուցիչ***	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարությա ն վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
Սկիզբ **10 րոպե**	Աշակերտները ամփոփում են նախորդ դասը՝ ներկայացնելով տնային աշխատանքները:	Կատարում է շտկումներ / եթե կան այդպիսիք/ , ամփոփում նախորդ դասը:	

5 րոպե	Ծանոթանում են նոր դասի թեմային	Ներկայացնում է դասի նպատակները	
	Աշակերտները ներկայացնում են ապակատար բառի իմաստն ու բառակազմությունը	Բացվում է սահիկ, որտեղ գրված է **ապակատար** բառը:	Կարող ենք ասել, թե ի՞նչ է նշանակում ապակատար բառը:
	Աշակերտները փորձում են գտնել տարբերությունները:	Բացվում է սահիկը,որտեղ գրված են հետևյալ նախադասությունները.	
10 րոպե		Մեզ տրվեցին **գրելու** թղթեր: Մենք **գրելու ենք** թղթերի վրա:	Կարո՞ղ եք բացատրել ընդգծված բառերի գործածության տարբերություն-ները Ի՞նչ խոսքի մասեր են ընդգծված բառերը:
	Պատասխանում են հարցերին:		Քերականական ի՞նչ վերջավորություն են ստանում:

Ընթացք-25 րոպե	Գրատախտակին գրում են տարբեր օրինակներ: Պատասխանում են հարցերին:		Ի՞նչ ժամանակ են ցույց տալիս տրված բայերը: Կարո՞ղ եք կազմել այլ բայերով նմանատիպ օրինակներ: Ինչպե՞ս է կազմվում պարզ բայերի անկատար դերբայը: Ինչպե՞ս է կազմվում սոսկածանցավոր բայերի անկատար դերբայը: Ինչպե՞ս է կազմվում Բազմապատկական բայերի անկատար դերբայը:

			Ինչպե՞ս է կազմվում կրավորական և պատճառական բայերի անկատար դերբայը: Ի՞նչ վերջավորություն են ստանում այս բայերը: Ինչու՞ են ստանում այդ վերջավորություններ ը:
	տեքստից դուրս են գրում տարբեր բայաձևեր: Աշխատում են զույգերով	Տալիս է տեքստ, հետևում առաջադրանքի կատարմանը:	

Ամփոփում 10 րոպե	Աշակերտները գծում են տրամագիրը, ապա հարցերի օգնությամբ տեղադրում համապատասխան բառերը:	Առաջարկում է աշակերտներին գրատախտակին գծել Վենի տրամագիր, և դրա օգնությամբ դուրս գրել վաղակատար, անկատար և ապակատար բայերի նմանություններն ու տարբերությունները: Ամփոփում է դասը: Հանձնարարում է տնային աշխատանք: Հավաքում է «Ելքի քարտեր»	

Տերմիններ **Գրագիտություն** **Թվագիտություն**	Ապակատար ձևաբայ, ապառնի ժամանակ, ներկա և անցյալ ժամանակաձևեր, բաղադրյալ ժամանակաձև,:
Աջակցություն	
Գնահատում	*ձևավորվող գնահատում:*
Դասին անդրադարձ	*Դասը անցավ գրեթե պլանավորած դասապլանին համապատասխան* : Սա ինձ հասկացնել տվեց, որ դասապլաններ կազմելով ու դրանց անդրադառնալով կարելի է մեզ համար նորություն եղած փաստերը դարձնել սովորական իրողություններ: Այսինքն՝ աշակերտները արդեն գիտեն, թե ինչ ընթացք է ունենալու դասապրոցեսը, ժամանակի կառավարումը առավել արդյունավետ է ստացվում, նույնիսկ հետաքրքրությունը շարժելու համար կարելի է այլ մեթոդներ կիրառել: Արդեն այս դասին տղաների ներգրավվածությունը ակնառու էր: Նրանք անընդհատ պատասխանում էին հարցերին, մասնակցում առաջադրանքների կատարմանը: Իսկ Ելքի թղթերը փաստում են, որ բոլորը մասնակցել են դասապրոցեսին, քանի որ նշել էին դասում եղած առանցքային կետերը, որոնք սովորել էին:

Դասապլան 3

Ուսուցիչ

Առարկա՝	Հայոց լեզու	Ամսաթիվ	18:01 2018	Կիսամյակ	1-ին	Դասարան	11-3
Խմբի բացվածք՝	Աղջիկ: 11 Տղա: 7 OS ՈՒՀԿ:						
Թեմա՝	՝Վաղակատար ձևաբայ						
Օգտագործվող նյութեր՝	Սահիկաշար, կպչուն թղթեր, պատճենված հատվածներ::						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասաժամին ծանոթացել են անկատար ու ապակատար ձևաբայերին, նրան քերականական առանձնահատկություններին:						
Դասի նպատակը՝	Աշակերտները կիմանան՝ թե որն է վաղակատար դերբայը կիմանան դերբայի կազմությունն ու առանձնահատկությունները, դրա տարբերություններն անորոշից, կարողանան ճիշտ գործածել խոսքում:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. Տեքստում գտնել վաղակատար ձևաբայերը Տարբերել դրանք անորոշից Կազմել անորոշից վաղակատար ձևեր						
Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները			Նպատակներին հասնելու ռազմավարությունը				

Կենտրոնանալ հայտորոշող հարցադրման վրա, կատարել ձևավորող գնահատում:	Կիրառել հարցադրումներ վերջնարդյունքները փաստելու համար:

Գործողություններ (ժամ/տևողություն) **1 դասաժամ՝** **45 րոպե**	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ** ***Ուսուցիչ***	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
Սկիզբ 5 րոպե   **2 րոպե**

Ընթացք **30 րոպե**	Պատրաստվում են, ապա պատասխանում հարցերին: Դուրս են գրում ձևաբայերը: Խմբերից մեկական անդամներ ներկայացնում են իրենց դուրս գրած բայերը: Կատարում են գրառումներ, պատասխանում են հարցերին:	տեքստեր, որտեղ գործածված են վաղակատար ձևաբայեր: Աշակերտներին առաջարկում է դուրս գրել անցյալ ժամանակով գործածված ձևաբայերը: /տրված է տարբեր անցյալ ձևաբայերով կազմված օրինակներ, աշակերտները նախ դուրս են գրում, բոլոր ձևերը, ապա հարցադրումների օգնությամբ տարբերակում վաղակատար ձևաբայերը/: Տալիս է հաջորդ տեքստը, որտեղ կան անորոշ ու վաղակատար դերբայական ձևեր, ապա առաջարկում է տարբերել դրանք միմյանցից	Հարց տվեք ձեր դուրս գրած ձևաբայերին: Առանձնացրեք տարբեր վերջավորություն ունեցող ձևաբայերը; Գտեք, թե որն է նրանց արտահայտած ժամանակային իմաստների տարբերությունները: Գտեք, թե որն է դրանց նմանությունն ու տարբերությունը:

Ամփոփում 10 րոպե	Աշխատում են խմբերով, կազմում տեքստեր: Մատերով ցույց են տալիս ճիշտ պատասխանը:	Հանձնարարում է կազմել տեքստ՝ գործածելով վաղակատար ձևաբայեր: Ամփոփում է դասը: Տալիս հայտորոշող հարցերը, աշակերտները պատասխանում են մատերի օգնությամբ:	Կարդացեք ձեր տեքստը, դուրս գրել բայերը: Ո՞ր տարբերակում են միայն վաղակատար ձևաբայերը: Ո՞ր տարբերակում են միայն անորոշ դերբայները:

		Հավաքում է ելքի թղթեր:	
Տերմիններ **Գրագիտություն** **Թվագիտություն**	Անորոշ դերբայ, վաղակատար ձևաբայ, անցյալ ժամանակ, անկախ և կախյալ բայեր:		
Աջակցություն			
Գնահատում	*ձևավորվող գնահատում*		

Դասին անդրադարձ	*Դասը անցավ պլանավորած դասապլանին համապատասխան, միայն չհաջողվեց լինել էլեկտրոնային գրատախտակ ունեցող դասասենյակում, և ես դասի նպատակները ներկայացրի բանավոր: Վերջապես ստացվեց ժամանակի լրիվ ճշգրիտ կառավարումը: Աշակերտները բոլորով ներգրավված էին դասին, ինչը ոգևորիչ էր ինձ համար:Դասալսողի կարծիքից և աշակերտների ելքի թղթերից հավաքված վկայություններից պարզ դարձավ , որ ես գրեթե հասել եմ իմ վերջնարդյունքներին: Դասալսողին շատ դուր եկավ հայտորոշող հարցերին տրված պատասխանների ձևը, հատկապես շեշտեց, որ այսպես կարողացավ տեսնել բոլորի պատասխանները:*

Դասապլան 4

Ուսուցիչ

Առարկա՝	**Հայոց լեզու**	**Ամսաթիվ**	**18:01 2018**	**Կիսամյակ**	**1-ին**	**Դասարան**	11-3
Խմբի բացվածք՝	**Աղջիկ: 11 Տղա: 7 OS ՈՒՀԿ:**						
Թեմա՝	Վաղակատար ձևաբայ						
Օգտագործվող նյութեր՝	Սահիկաշար, կպչուն թղթեր, պատճենված հատվածներ::						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասաժամին ծանոթացել են անկատար ու ապակատար ձևաբայերին, նրան քերականական առանձնահատկություններին:						

Դասի նպատակը՝	Աշակերտները կիմանան՝ թե որն է վաղակատար դերբայը կիմանան դերբայի կազմությունն ու առանձնահատկությունները, դրա տարբերություններն անորոշից, կարողանան ճիշտ գործածել խոսքում:
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. Տեքստում գտնել վաղակատար ձևաբայերը Տարբերել դրանք անորոշից Կազմել անորոշից վաղակատար ձևեր

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Կենտրոնանալ հայտորոշող հարցադրման վրա, կատարել ձևավորող գնահատում:	Կիրառել հարցադրումներ վերջնարդյունքները փաստելու համար:

Գործողություններ (ժամ/տևողություն) **1 դասաժամ՝** **45 րոպե**	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ** ***Ուսուցիչ***	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
Սկիզբ 5 րոպե			

	Ծանոթանում են դասի թեմային	Ներկայացնում է դասի նպատակները	
2 րոպե	Ծանոթանում են դասի նպատակներին	Սահիկով ներկայացնում է դասի նպատակները	
3 րոպե	Պատրաստվում են, ապա պատասխանում հարցերին:	Աշակերտներին բաժանում է խմբերի, տալիս տարբեր մշակված տեքստեր, որտեղ գործածված են վաղակատար ձևաբայեր:	
Ընթացք 30 րոպե	Դուրս են գրում ձևաբայերը: Խմբերից մեկական անդամներ	Աշակերտներին առաջարկում է դուրս գրել անցյալ ժամանակով գործածված ձևաբայերը: /տրված է տարբեր անցյալ ձևաբայերով կազմված օրինակներ,	Հարց տվեք ձեր դուրս գրած ձևաբայերին: Առանձնացրեք տարբեր վերջավորություն ունեցող ձևաբայերը;

	ներկայացնում են իրենց դուրս գրած բայերը: Կատարում են գրառումներ, պատասխանում են հարցերին: Աշխատում են խմբերով, կազմում տեքստեր:	աշակերտները նախ դուրս են գրում, բոլոր ձևերը, ապա հարցադրումների օգնությամբ տարբերակում վաղակատար ձևաբայերը/: Տալիս է հաջորդ տեքստը, որտեղ կան անորոշ ու վաղակատար դերբայական ձևեր, ապա առաջարկում է տարբերել դրանք միմյանցից Հանձնարարում է կազմել տեքստ՝ գործածելով վաղակատար ձևաբայեր:	Գտեք, թե որն է նրանց արտահայտած ժամանակային իմաստների տարբերությունները: Գտեք, թե որն է դրանց նմանությունն ու տարբերությունը: Կարդացեք ձեր տեքստը, դուրս գրել բայերը:

Ամփոփում **30 րոպե**	Մատերով ցույց են տալիս ճիշտ պատասխանը:	Ամփոփում է դասը: Տալիս հայտորոշող հարցերը, աշակերտները պատասխանում են մատերի օգնությամբ: Հավաքում է ելքի թղթեր:	Ո՞ր տարբերակում են միայն վաղակատար ձևաբայերը: Ո՞ր տարբերակում են միայն անորոշ դերբայները:

Տերմիններ **Գրագիտություն** **Թվագիտություն**	Անորոշ դերբայ, վաղակատար ձևաբայ, անցյալ ժամանակ, անկախ և կախյալ բայեր:
Աջակցություն	
Գնահատում	*ձևավորվող գնահատում*
Դասին անդրադարձ	*Դասը անցավ պլանավորած դասապլանին համապատասխան, միայն չհաջողվեց լինել էլեկտրոնային գրատախտակ ունեցող դասասենյակում, և ես դասի նպատակները ներկայացրի բանավոր: Վերջապես ստացվեց ժամանակի լրիվ ճշգրիտ կառավարումը: Աշակերտները բոլորով ներգրավված էին դասին, ինչը ոգևորիչ էր ինձ համար:Դասալսողի կարծիքից և աշակերտների ելքի թղթերից հավաքված վկայություններից պարզ դարձավ , որ ես գրեթե հասել եմ իմ վերջնարդյունքներին: Դասալսողին շատ դուր եկավ հայտորոշող հարցերին տրված պատասխանների ձևը, հատկապես շեշտեց, որ այսպես կարողացավ տեսնել բոլորի պատասխանները:*

Դասապլան 5

Ուսուցիչ

Առարկա՝	Հայոց լեզու	Ամսաթիվ	29:01 2018	Կիսամյակ	1-ին	Դասարան	11-3
Խմբի բացվածք՝	Աղջիկ: 11 Տղա: 7 OS ՈՒՀԿ:						
Թեմա՝	Հրամայական եղանակ						
Օգտագործվող նյութեր՝	Սահիկաշար, կպչուն թղթեր, պատճենված հատվածներ::						
Ամբողջական պատկեր՝							
Դասի նպատակը՝	Աշակերտները Պետք է հասկանան հրամայական եղանակի բայաձևերի կազմության առանձնահատկությունները հրամայական եղանակի բայաձևերի արտահայտած իմաստային առանձնահատկությունները:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. Ճիշտ կիրառել բայի հրամայական ժամանակաձևերը գրավոր և բանավոր խոսքում: Տարբերակել ըղձական եղանակի բայաձևերից և անորոշի նմանատիպ կիրառությունից:						
Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները				Նպատակներին հասնելու ռազմավարությունը			

Կենտրոնանալ հարցադրման մեթոդի կիրառության վրա:	Բանավոր հարցադրումներ:

Գործողություններ (ժամ/տևողություն) **1 դասաժամ՝** **45 րոպե**	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ** ***Ուսուցիչ***	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
Սկիզբ 7 րոպե **2 րոպե** **5 րոպե**	Ծանոթանում են դասի թեմային Ծանոթանում են դասի նպատակներին	Ներկայացնում է դասի նպատակները Սահիկով ներկայացնում է դասի նպատակները	Առաջարկում է իրար տալ հրամաններ,

Ընթացք **30 րոպե**	Աշխատում են զույգերով: Իրար տալիս են հրամաններ կամ խնդրանք են հայտնում: Պատասխանում են հարցերին:	Շրջում է դասարանում, գրի առնում նրած առաջարկած օրինակները:	խնդրանքով դիմել կամ խորհուրդ տալ: Ի՞նչ վերջավորություն ստացան ա խոնարհման բայերը հրամայականը կազմելիս: Ի՞նչ վերջավորություն ստացան ե խոնարհման բայերը հրամայականը կազմելիս: Ի՞նչ վերջավորություն ստացան սոսկածանցավոր բայերը հրամայականը կազմելիս:

	Պատասխանում են հարցերին՝ պատահական սկզբունքով ընտրված անուններով: Աշխատում են զույգերով: Կատարում են գրառում:	Բացում է հաջորդ սահիկը, որտեղ գրված են անկանոն բայեր: Կատարում է շտկումներ, ուղղորդում կատարում: Ուշադրություն է հրավիրում գրավոր և բանավոր խոսքում ճիշտ գործածելուն, գրավոր խոսքում ուշադրություն է հրավիրում կետադրության վրա:	Ի՞նչ վերջավորություն ստացան ա խոնարհման բայերը հրամայականը կազմելիս: Կազմեք տրված բայերի հրամայականը: Իրար հրաման տվեք՝ արգելելով որևէ բան անել: Հիմա գրի՛ առեք տրված բայաձևերը: Կարո՞ղ եք բացատրել այս

Ամփոփում 7 րոպե	Պատասխանում են հարցերին: Կարդում են դասագրքի վարժություններից:	Սահիկով բացում է անորոշով գործածված հրաման արտահայտող բառերի օրինակներ: Հետևում է առաջադրանքի կատարմանը: Հանձնարարում է տնային աշխատանք:	բայերի տարբերությունը մեր գործածած ձևերից: Կարդացեք նախադասությունները՝ դուրս բերելով հրամայականի ձևերը: Գրել շարադրանք, որի բովանդակությունը հետևյալն է, պատկերացրեք դուք որևէ հաստատության / դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց, վարսավիրանոց և այլն/ ղեկավար եք և աշխատանքը կարգավորելու համար հրամաններ

		Հավաքում է ելքի թղթեր:	եք ալիս ձեր ենթականերին:
Տերմիններ **Գրագիտություն**	Հրամայական եղանակ, ապառնի ժամանակ, արգելական հրամայական, հրամայական բայաձևեր: Սովորում են հրամայական բայաձևերի ուղղագրությունն ու կետադրությունը:		
Գնահատում	*Ձևավորվող գնահատում*		

Դասին անդրադարձ	*Դասը անցավ պլանավորած դասապլանին համապատասխան, ավելի ու ավելի է ինձ համար կառավարելի դառնում ժամանակը: Միայն ելքի թղթերը հավաքեցի դասամիջոցին, ինչպես և սպասում էի, եղան հրամայական եղանակի կազմության թյուրըմբռնումներ, քանի որ աշակերտները կազմում էին առօրյա խոսքում կիրառվող բայաձևերի նման /օրինակ՝ գրի՛, խոսի՛/: Անկանոն բայերինը իմ սպասածից ավելի ճիշտ կազմեցին: Դասին աշակերտները բավականին ակտիվ էին, ինչը ոգևորիչ էր ինձ համար: նույնիսկ իրար հրամաններ տալիս կատակեցին, ինչն էլ ավելի ակտիվացրեց դասը: Ելքի թղթերում նշել էին, որ ամեն ինչ գործածելով հասկացան, նաև, որ շատ տպավորիչ դաս էր: Դասին ներկա չէին 5 աշակերտներ, սակայն եղողները բոլորն էլ ակտիվ մասնակցում էին դասին: Ելքի թղթերում վատ առաջադիմություն ունեցող աշակերտներից մեկը նշել էր, որ չէր ուզում դան ավարտվեր, քանի որ իր համար Օշատ հետաքրքիր էր: Իմ՝ հարցադրումներով դաս վարելու հարցում ևս առաջխաղացում էի նկատում, քանի որ ավելի ճկուն էի կիրառում հարցադրումները, թյուրըմբռնումներն ավելի հեշտությամբ էի ուղղում:*

Դասապլան 5

Ուսուցիչ

Առարկա՝ հայոց լեզու		**Ամսաթիվ**	**1.02.18**	**Կիսամյակ**	**2**	**Դասարան**	11
Խմբի բացվածք՝	**Աղջիկ:**	**Տղա:**	**OS**	**ՈՒՀԿ:**			
Թեմա՝	Բայի ընձական եղանակ						

Օգտագործվող նյութեր՝	Սահիկաշար, տպված տեքտեր, կպչուն թղթեր:
Ամբողջական պատկեր՝	Նախորդ դասին աշակերտները ծանոթացել են հրամայական եղանակին, դրա կազմությանը, խոնարհմանը:
Դասի նպատակը՝	• Իմանալ ըղձական եղանակի կազմությունը • ըղձական եղանակի խոնարհման ձևերը • գործողության կատարման ցանկություն արտահայտելը
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. • Բայերը խոնարհել ըղձական ներկա և անցյալ ժամանակաձևերով • Տեքստից դուրս գրել, որոշել դրանց դեմքն ու թիվը • Գործածել դրանք գրավոր խոսքում

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Բանավոր հարցադրումներ	Ձևավորող գնահատում, գավոր վկայությունների հավաքագրում:

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
2 րոպե 5 րոպե	Ծանոթանում են դասի նպատակներին Պասխանում են հարցերին Գրառումներ են կատարում	Սահիկաշարի օգնությամբ ներկայացնում է դասի նպատակները: Սահիկի օգնությամբ ցույց է տալիս լուսանկար, որտեղ պատկերված են երազող մարդիկ:	- Ի՞նչ են անում նկարում պատկերված մարդիկ: Իսկ դուք ունե՞ք երազանքներ:

	Պատասխոնում են հարցերին		Իսկ ունեցե՞լ եք երազանքներ, որ չեն կատարվել:
			Լեզվում ի՞նչ բայաձևերով կարելի է արտահայտել երազանքները:
10 րոպե	Տետրերում կազմում են համառոտ տեքստ:	Բացում է հաջորդ սահիկը, որտեղ ներկայացված են ըղձական բայաձևի համար նախատեսված հարցեր Դասարանը բաժանվում է երկու մասի. Մի մասը գրում է ..Եթե ես հրաշագործ լինեի՝,,, մյուս մասը՝ ,,Եթե ես հրաշագործ	Կազմել 5 նախադասություն ից կազմված կարճ շարադրանք, որտեղ կիրառված լինեն բայեր, որոնք պատասխանում են տրված հարցերին: Խոնարհեք տրված բայերը ապառնի և

10 րոպե	Գրատախտակին գրում են իրենց կիրառած բայերից Խոնարհում են իրենց գրած բայերը:	լինեմ,, թեմայով շարադրանք: Պատահականության սկզբունքով դուրս են բերվում աշակերտների անունները, ովքեր պատասխանում են հարցերին:	անցյալ ժամանակաձևերում: Փորձեք բացատրել ըղձական եղանակի Բայաձևերի արտահայտած ժամանակային իմատները: Փորձեք բացատրել տրված բայաձևերի ուղղագրությունը անցյալ ժամանակաձևում: Ներկայացրեք, թե ինչ հերթականությամբ եք եղադրել բայերը:

5 րոպե	Կատարում են տեքստային աշխատանք: Ստուգում են իրենց գրած հատվածները:	Բաժանվուն են տեքստեր, որտեղ պիտի տեղադրվեն համապատասխան ընձական եղանակի բայաձևերը: Բացվում է սահիկը, որտեղ կան ճիշտ պատասխանները:	Գտնել ընձական եղանակի բայաձևերը:
5 րոպե	Կարդում են պահանջը, պատասխանում հարցերին: Գրառում են կատարում Ելքի թղթիկներում:	Կատարում են վարժություն դասագրքից: Տալիս է տնային հանձնարարություն, բաժանում է ելքի թղթեր:	

8 բոպե			
Տերմիններ **Գրագիտություն** **Թվագիտություն**	Ըղձական եղանակ, անցյալ և ապառնի ժամանակ, խոնարհում: Աշակերտները սովորում են ըղձական եղանակի բայաձևերի ուղղագրությունը:		
Գնահատում	Կատարել ձևավորող գնահատում:		
Դասին անդրադարձ	Դասն անցավ գրեթե այնպես, ինչպես պլանավորել էի; Քանի որ նախորդ դասին ամփոփել էինք սահմանական և հրամայական եղանակների բայաձևերը, միանգամից սկսեցի նոր դասը՝ ներկայացնելով նոր դասի նպատակները, վերջնարդյունքները: Առաջնամասում ներկայացրի նկարը, որտեղ պատկերված էին երազող մարդիկ. Աշակերտները միանգամից ասացին, որ մարդիկ երազում են ու նշեցին, որ ըղձական եղանակի բայաձևերի միջոցով կարելի է արտահայտել երազանքները: Դասապլանիս մոյս հատվածում մի փոքր շեղվեցի՝ հարցադրումների միջոցով բացահայտելով ըղձական եղանակի բայաձևերի քերականական հատկանիշները: Սա նախատեսել էի անել շարադրանքից հետո, սակայն զգացի, որ նախապես ավելի ճիշտ է դրան անդրադառնալը: Ապա աշակերտները կազմեցին շարադրանք՝ գործածելով ըղձական եղանակի բայաձևեր: Աշխատանքը բվականին հաջող ստացվեց, քանի որ աշակերտները ոչ միայն քերականական ձևերն էին ճիշտ գործածել, այլև գաղափարի վրա էին աշխատել: Տեքստային աշխատանքը ևս լավ ստացվեց.		

	աշակերտները ոգևորված էին, եղան թյուրըմբռնումներ մի քանի բառերի իմաստները հասկանալիս, սակայն դա ևս շտկվեց, չհասցրի կատարել դասագրքի վարժությունը, ինչը հանձնարարեցի տնային աշխատանք: Վերջում զգացի, որ մի բան է թերի մնացել, այն, որ տեքստեր պիտի պատրաստեի, որտեղից աշակերտները դուրս կգրեին այս բայաձևերը: Նաև որոշ հարցադրումներ եղան, որ դասապլանում նշված չէին: Ուրախալի էր, որ՝,,Ելքի թղթերում,, բոլորը նշել էին, որ իմացան ըղձական եղանակի մասին ամեն ինչ:

<u>Հավելված 2.</u>

<u>Հավաքագրած որոշ վկայություններ</u>







Հարցազրույցի համառոտ ակնարկ

Աշակերտներ

1. Ա աշակերտ. Դասերը շատ հետաքրքիր էին, մենք հաճույքով էինք մասնակցում, որովհետև ամեն ինչ . սովորում էինք դասարանում: Հետաքրքիր էր խմբային աշխատանքները, որոնք մենք շատ սիրեցինք:
2. Ես ամեն ինչ իմացա բայի մասին, հիմա հեշտությամբ շտեմարանից օգտվում եմ:
3. Առիթ չունեցա ձանձրանալու, կուզեմ էլի մասնակցել նման դասերի:

4. Դասը շատ արագ էր անցնում, չէինք ձանձրանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1Chris A. Caram and Patsy B. Davis, Inviting Student Engagement with Questioning, 2005:

2Fryer W , Strive to engage, not enthrall, 2012:

3Jennifer A. Fredricks and Wendy McColskey, The Measurement of Student Engagement,

4Karron G. ,Developing questioning skills,

5Petty G. Teaching today, 2008.

6smarttech.com/GeneralInformation/